

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ  
ՀԱՅԱՀԱՏԻՆՆԵՐԻՆ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ

---

Ա.ԴԱՄՅԱՆ Ա., ԽՐԻՄԼՅԱՆ Ա.

ԴԱԼՄԱԹՅԱՆ ՅԵՐԻՑՈՒԿԻ  
ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՆ

---

05 FEB 2018

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ

ՀԱՅԱՍՏԱՏԻԿԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ

633.48

Ա.ԴԱՄՅԱՆ Ա., ԽՐԻՄԼՅԱՆ Ա.

ԴԱԼՄԱԹՅԱՆ ՅԵՐԻՑՈՒԿԻ  
ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՆ

Գաա. խմբագիր՝ Ս. Հովսեփյան  
Թարգմանեց՝ Զ. Ասովաճատրյան  
Տեխ. խմբ. և սրբագրիչ՝ Ս. Այվազյան  
Գլավ՝ Լիազոր Ձ 1199  
Հրատար. Ձ 440 տիրած 1500, պատվեր 595  
Հանձնվել է արտադրության 1937 թ. հունիսի 7-ին  
Ստորագրված է ավագընդու 1937 թ. հուլիսի 8-ին  
Գյուղհրատի տպարան, Յերևան, Նալբանդյան, 11

ԳՐԱԴՂԼԻՔ

1937

ՇՆԻՎԱՆ

НАРКОМЗЕМ АРМ. ССР  
ЗЕРНОВОЕ УПРАВЛЕНИЕ

Адамян С. и Хримлян А.

АГРОТЕХНИКА  
ДАЛМАТСКОЙ РОМАШКИ



1-37969f

Մեր սոցիալիստական դաշտերի, մասնավորապես նրա լեռնային մասի աշխատավորութայնը միանգամայն հայտնի յե վաճաղիկը: Շատ շատերը գիտեն անգամ այդ բույսի պատմությունը, գիտեն թե ինչպես նախահեղափոխական շրջանում բուրժուազիան աշխատում եր գիշատիչ ձևով իր անձնական շահին ծառայեցնե մեր յերկրի ամեն մի բարիքը, այդ թվում նաև մեր դաշտերի վաճաղիկը:

Ինչ ե ասում պատմությունն այդ առթիվ: Դեռ 14—15-րդ դարերում Հայաստանի գյուղացիության զգալի մասը գիտեր վաճաղիկն իբրև թունավոր նյութ՝ զանազան միջատների, այդ թվում նաև իբրև վի դեմ պայքարելու միջոց, վորից և ստացել ե յուր անունը:

Ահա այս հանգամանքը խթան ե հանդիսանում վաճաղիկն իբրեւ պարանք արտահանելու, յերբեք չմտածելով նրա ավելի ռացիոնալ ոգտագործման ուղղությամբ: Յեւ դեռ 19-րդ դարի սկզբից վաճաղիկ արտահանումն ավելի լայն ծավալ ե ընդունում. մեկը մյուսի հետեւից առաջ են գալիս Սմբատյաններ, Միրզոյաններ (վերջինս իբրև աղցիոներական ընկերություն), վորոնք իրենց նպատակ եյին դրել հանուն իրենց անձնական շահի արտահանել մեր յերկրի համար

խոշոր նշանակութիւն ունեցող թանգարժեք նյութերը, այդ թվում նաև լվածաղիկը:

Ըստ տվյալների՝ 1850 թվականից սկսած կովկասից տարեկան 720.000 ֆունտ լվածաղիկ և նրանցից պատրաստած փոշի, իսկ Հայաստանից յուրաքանչյուր տարի հազարավոր փթեթով լվածաղիկ է արտահանվելիս յեղել: Հետագայում, Դալմաթյան յերիցուկի հանդես գալուց հետո միայն այդ տեմպն սկսում է նվազել, իսկ համաշխարհային պատերազմից հետո ու մանավանդ հակահեղափոխական դաշնակցության քայքայիչ քաղաքականության հետեվանքով, մաուզերիստների կառավարության որոք այդ գործը ևս, ինչպես առհասարակ ժողովրդական անստեպության մնացած բոլոր ճյուղերը, քայքայման է յենթարկվում և բոլորովին դադարում է իբրև հանրագուտ նյութ ոգտագործվել:

Միայն Խորհրդային իշխանության ջանքերով, անտեսական խոշոր նշանակութիւն ունեցող բազմաթիվ ձեռնարկումների շարքում, լվածաղիկի գործը ևս սկսում է վերականգնվել և հսկա քայլերով զարգանալ:

Սկսած 1931 թվականից մինչև 1935 թվականը տեղական վայրի լվածաղիկ հավաքվել է 2500-ից մինչև 8647 կիլոգրամ տարեկան: Դրան

զուգընթաց նույն ժամանակամիջոցում կազմակերպվում է ղեղաբույսերի, այդ թվում նաև պլերետրումի հատուկ խորհտեստեպութիւն՝ Գետավանում, վորտեղ, մանավանդ վերջին յերեք տարվա ընթացքում՝ 1933-36 թվականներին, թե Դալմաթյան յերիցուկի ազրոտեխնիկան է ուսումնասիրվում, թե ցանքի հետագա լայնացման համար անհրաժեշտ անկադաշտեր և սածիլանոցներ են ստեղծվում: Շնորհիվ այդ հանգամանքի 1936 թվին դալմաթյան յերիցուկի ցանքին լայն ծավալ է տրվում և առաջին անգամ 1936 թվի աշանից ցանքերն Ստեփանավանի շրջանից տարածվում են դեպի Ամասիայի, Ապարանի, Մարտունու, Բասարգեչարի շրջանները, ընդհանուր ցանքի ու սածիլանոցի տարածութիւնը հասցնելով 70 հեկտարի:

Ահա այդ կարճ ժամանակամիջոցի վորձերի և մասսայական աշխատանքի արդյունք է նաև ներկա աշխատութիւնը, վորի նպատակն է մեր կոլտեստեական մասսային տեղյակ պահել և սովորեցնել դալմաթյան յերիցուկի մշակույթն ու ազրոտեխնիկական կարևորագույն ձեռնարկումները:

Մեզ համար իբրև միանգամայն նոր կուլտուրայի վերաբերող աշխատութիւն, անշուշտ, նա կունենա խոշոր թերութիւններ, վորոնք մեր սոցիալիստական դաշտերի ստախանովականների

փորձի հիման վրա, անպայման, հետագայում կը  
շտկվեն և կհարմարեցվեն մեր պայմաններին։  
Սյդ շտկումներից մեկն էլ վերաբերում է  
հատուկ սածիլանոց ստեղծելու խնդրին։ Թեև այս  
աշխատութեան մեջ հեղինակները դալմաթյան յե-  
րիցուկի մշակույթին իբրև անհրաժեշտ պայ-  
ման համարում են հատուկ սածիլանոցների կազ-  
մակերպումը, սակայն կարծում ենք, վոր այս  
տարվա տված փորձերը կը գան ապացուցելու,  
վոր առանց սածիլանոցի—հենց անմիջապես դաշ-  
տում՝ համապատասխան միջարքային տարա-  
ծության (70 սմ) վրա շարքերով ցանված սեր-  
մերով էլ շատ հեշտութեամբ կարելի յե այս կուլ-  
տուրան տարածել։ Հետևապես անհամեմատ կը  
հեշտանա դալմաթյան յերիցուկի մշակման գոր-  
ծը, մանավանդ աշխատանքների մեքենայացման  
և սածիլանոցի աշխատանքները վերացնելու մի-  
ջոցով։ Սակայն սկզբնական այս յերկու տարին  
դեռ պետք է շարունակենք սածիլանոցների կազ-  
մակերպումը, իհարկե, վոչ իբրև ազրոտեխնի-  
կական անհրաժեշտ մի ձեռնարկում, այլ միայն և  
միմիայն սերմերի ստացման կոնֆիցիենտը բարձ-  
րացնելու և կուսակցութեան ու կառավարութեան  
կողմից մեզ առաջադրված 4—5 հազար հեկտար  
դալմաթյան յերիցուկի ցանքի պլանն ապահովելու  
մի միջոց, վորից հետո (թերևս նույնիսկ 38

թվականից) դալմաթյան յերիցուկի համար սա-  
ծիլանոց կազմակերպելը միանգամայն ավելորդ  
կհամարվի։

Նման պայմաններում դալմաթյան յերիցուկը,  
անշուշտ, խոշոր տնտեսական եֆեկտ կունենա և  
վերջին հաշվով մեր կուլտնտեսականներին ե՛լ ա-  
վելի ունևոր դարձնելու, նրանց կուլտուր-կեն-  
ցադային կյանքը բարվոքելու խթաններից մեկը  
կհանդիսանա։

Խ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

## Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Յ Յ Ո Ւ Ն

Հայաստանում առաջին անգամ դալմաթյան յերիցուկը մշակվել է Ստեփանավանի շրջանի Գետավան խորհանտեսությունում, վորտեղ աճեցվում էյին դեղաբույսեր, յեթերային յուղ սվող և տեխնիկական կուլտուրաներ:

Դալմաթյան յերիցուկի փորձնական աշխատանքներն սկսվեցին 1932 թվին՝ արտասահմանից ստացված սերմերով: Այդ սերմերի ծլունակությունը հավասար էր 30—35%—ի:

Այդ սերմերը ցանվեցին և աճեցվեցին տաք և ցուրտ ջերմոցներում և ստացված սածիլները անկանյութ ծառայեցին արտադրական պլանտացիաների համար:

Տնկանյութի աճեցման վերաբերյալ հետեվյալ փորձերը կատարվեցին: Ցանքը տաք և ցուրտ ջերմոցներում, թեփի տակ (մարգերի յերեսը ծածկվում էր թեփով), ցանքը վաղ և ուշ գարնանը և ուշ աշնանը:

Յերկու տարի շարունակ տարված հիշյալ փորձերի հիման վրա, և յեխելով 1934 թ. ուշ աշնան ցանքի արդյունքներից, դալմաթյան յե-

րիցուկի ցանքի ամենալավագույն ժամկետ ընդունվեց ուշ աշնանացանի ցանքը:

Ջերմոցներում սածիլ աճեցնելն արդյունավետ չէ, վորովհետև այդ դեպքում սածիլների ինքնարժեքը բարձրանում է և այդ տնկանյութն եժանացնելու համար, յեխելով կատարված փորձերի արդյունքներից, տնկանյութի հետագա աճեցումը ջերմոցներից վերջնականպես տեղափոխվեց տնկարան:

1933 թվի աշնանը հիմնադրվեց 5 հեկտար տարածությամբ պլանտացիա, 1934 թվին դալմաթյան յերիցուկի պլանտացիաների տարածությունն արդեն հասավ 15 հեկտարի, 1935 թվին՝ 20 հեկտարի և 2 հեկտար էլ վարդաբլուրի կուլտեստությունում: Դալմաթյան յերիցուկը Հայաստանում մշակության մեջ մտցնելու գործում այս կուլտեստությունը պիտներ հանդիսացավ:

Ցանքի վրա տարված լավ խնամքի շնորհիվ 1936 թվին ստացված սերմացուն արդեն ուներ 64% ծլունակություն, այսինքն՝ յերկու անգամ ավելի բարձր, քան արտասահմանից ստացված սերմերի ծլունակությունը:

Ստեփանավանի շրջանում (նախկին Գետավան խորհանտեսությունում) դալմաթյան յերիցուկի մշակության վերաբերյալ կատարվող գիտահետազոտական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել հակ այն շրջաններում, վորոնք նոր

են սկսում զբաղվել այս կուլտուրայով, մանրամասն ուսումնասիրելով հողային, կլիմայական պայմանները և այլն:

Համաձայն ԽՍՀՄ և ՀԽՍՀ Հողօրհրդամատենների վորոշման՝ դալմաթյան յերիցուկը մշակության մեջ մտցնելու մասին, Հայաստանի լեռնային շրջաններում այդ կուլտուրայի ցանք եր կատարված, վորի հետևանքով 1937 թվի համար Ստեփանավանի, Ապարանի, Ամասիայի, Բասարգեչաբի և Մարտունու շրջաններում ունենք 10 հեկտար տնկարան (վորի սածիլներով կարելի յե տընկել 150 հեկտար պլանտացիա), 44 հեկտար պլանտացիա (20 հեկտար ծաղկաբեր և 24 հեկտար 1936 թվին տնկած սածիլներից) և 16 հեկտար ցանովի պլանտացիա: Այսպիսով այդ շրջաններում դալմաթյան յերիցուկով ընդամենն զբաղված ե 70 հեկտար:

### ԴԱԼՄԱԹՅԱՆ ՅԵՐԻՑՈՒԿ

Դալմաթյան յերիցուկը (*Pyrethrum cinerariaefolium* Trev.) պատկանում ե բարդածաղկավորների ընտանիքին. բազմամյա բույս ե: Դաշտում մնում և ոգտագործվում ե 10 տարուց վոչ պակաս: Տերևները փետրածև կտրտված են. կանաչավուն-մոխրագույն ծաղկափթթուկները կազմված ե կենտրոնական խողովակածև դեղին ծաղիկներից, վորի շուրջը դասավորված են դեղ-

նա-սպիտակ լեզվակածև ծաղիկներ: Այդ գամբյուղի տրամագիծը 5—12 միլիմետր ե: Հոտը բնորոշ ե:

Առաջին տարվա բերքահավաքի ժամանակ դալմաթյան յերիցուկի թփի ծաղալը հետևյալն ե. տրամագիծը— հողի մակերեսին 15 սմ, իսկ թփի վերևում՝ 20—25 սմ, բարձրությունը՝ 25—30 սմ: Յերկրորդ տարին թփի ծաղալը միջին հաշվով լինում ե տրամագիծը ցածում՝ 20 սմ, թփի վերևում՝ 30—35 սմ, բարձրությունը՝ 35—40 սմ:

Առաջին տարին մեկ թփի վրա լինում ե 50—120 ծաղիկ, յերկրորդ տարին 100—200 ծաղիկ, իսկ վորոշ թփերի վրա՝ 300 ծաղիկ:

Մեկ ծաղիկը չչորացրած վիճակում կշռում ե 0,78 գրամ (միջինն 8 կշռումից), իսկ չորացնելուց հետո՝ 0,24 գրամ:

Չորս մաս չչորացրած ծաղկից չորացնելուց հետո միջին հաշվով ստացվում ե մեկ մաս չորացրած, այսինքն՝ 100 կգ թարմ ծաղկից ստացվում ե 25 կգ չորացրած:

Դալմաթյան յերիցուկի ծաղիկները, ինչպես նաև տերևներն ու ցողունները պարունակում են յերկու տեսակ յեթերատու յուղ, վորոնք կոչվում են պիրետրին 1-ին և պիրետրին 2-րդ (ծաղիկների մեջ պիրետրինի պարունակությունն անհամեմատ ավելի մեծ ե, քան տերևների և ցողունի մեջ):

Պիրեոքինը թույն է, վոր գործ են ածում  
գյուղատնտեսական և այլ վնասատուների դեմ  
պայքարելու համար:

### ԴԱՄԱՔՅԱՆ ՅԵՐԻՑՈՒԿԻ ՄՇԱԿՄԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Դավաթյան յերիցուկը տարածված է Դի-  
նարյան ալպերի լեռնային պայմաններում՝ Հեր-  
ցեգոլինայում և Դավաթիայում:

Դավաթյան յերիցուկը մշակվում է Ֆրան-  
սիայի հարավում, Իսպանիայում, Իտալիայում և  
հատկապես Ճապոնիայում, վորն այս կուլտուրայի  
մշակման տեսակետից ամբողջ աշխարհում առա-  
ջին տեղն է զբաղում:

Խորհրդային Միությունում դավաթյան յե-  
րիցուկի մշակութամբ առաջին անգամ սկսեցին  
զբաղվել 1930—1931 թվերին Ղրիմում՝ ընկ.  
Մոլոտովի անվան բուսաբանական այգում (նախ-  
կին Նիկիտսկի այգի):

Ավելի ուշ, 1932 թվին դավաթյան յերի-  
ցուկի մշակման փորձեր զրվեցին Վորոնեժում՝  
«Սպարտակ» խորհրդատեսությունում և Հայաս-  
տանում՝ նախկին «Գետավան» խորհրդատեսու-  
թյունում:

Այս կուլտուրայի մշակման համար հիմա-  
կան ջրջաններ են հանդիսանում Հայաստանի լեռ-  
նային ջրջանները, վորոնք իրենց թե հողային և



Նկ. 1. Յերիցուկի թուփը՝ ծաղիկներով

Թե կլիմայական պայմաններով միանգամայն համապատասխանում են զալմաթյան յերիցուկի զարգացման համար պահանջվող պայմաններին: Այդպիսի համապատասխան շրջաններ են՝ Ստեփանավանի, Ամասիայի, Ապարանի, Մարտունու և Բասարզեչարի շրջանները: Այս շրջաններում արդեն կան զալմաթյան յերիցուկի ցանքեր ու տընկված դաշտեր:

Աղյուսակ № 1

Դալմաթյան յերիցուկի մեակման արածարյունները րս օրգաների՝ 1936 թվին

№ ըստ կարգի	Շրջանների անունները	Պլանտացիա՝ հեկտար	Տնկարան՝ հեկտար	Ընդամենն ամբողջ շրջանում՝ հեկտ.
1	Ստեփանավանի	44 *)	2,5	46,5
2	Ապարանի	6,5	2,4	8,9
3	Ամասիայի	2,7	2,0	4,7
4	Բասարզեչարի	3,0	2,0	5,0
5	Մարտունու	3,08	1,06	4,14
Ընդամենը շրջաններում		59,28	9,96	69,24

Դալմաթյան յերիցուկի մշակութային հետագա զարգացումն ու ընդլայնումը մեծ հաջողությամբ կարելի յե անցկացնել նաև Կիրովականի, Դիլիջանի և Սիսիանի շրջաններում:

Հայաստանում զալմաթյան յերիցուկը կարող ե բռնել մինչ 5000 և ավելի հեկտար տարածություն:

\*) Մարդկատու պլանտացիա՝ 20 հեկտար, սածիլներով տնկած՝ 24 հեկտար, իսկ այս սյունակի մնացած թվերը ցանովի պլանտացիաներ են:

## ՀՈՂԱՅԻՆ-ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Դալմաթյան յերիցուկը պահանջում է բացառիկ փուխը, դյուրաթափանց, կրային հող: Ծանր կավային հողերը միանգամայն անպետք են այս կուլտուրայի զարգացման համար: Անպետք են նաև ցածրադիր հողերը, վորոնց ստորերկրյա ջրերը շատ մոտ են մակերեսին, ինչպես և թթու հողերն ու այն տեղերը, վորտեղ անձրևի հոսող ջրերը կանգ են առնում:

Հողի հավելյալ խոնավության առակայությունից այս կուլտուրան հիվանդանում է արմատային փտախտով:

Դալմաթյան յերիցուկի զարգացման համար բարենպաստ կլիմայական պայմաններ են հանդիսանում մեր լեռնային շրջանների կլիմայական պայմանները: Անջրդի պայմաններում մթնոորտային տեղումների քանակը պետք է լինի 500—600 միլիմետրից վոչ պակաս, և հատկապես ցանկալի յեն ապրիլի և հունիսի տեղումները:

Վորպես յերիցուկի զարգացման համար բարենպաստ կլիմա ունեցող վայրի, բերում ենք Ստեփանավանի միջին ամսական ջերմաստիճանները:

Ապրել	Մայիս	Հունիս	Հուլիս	Ոգոստոս	Սեպտեմ.	Հոկտ.
6,3	10,3	13,6	16,1	18,6	14,2	9,6

Յեթե ապրիլին կամ մայիսին ջերմաստիճանը շատ բարձր լինի, ապա դալմաթյան յերիցուկի ծիլերի վրա ֆլասակար ազդեցութիւն կարող է թողնել, վորովհետև այդ ամիսներին նրա արմատային սիստեմը դեռ թույլ է և բարձր ջերմութեան ազդեցութեան տակ արագ գոլորշիացման համապատասխան քանակութեամբ ջուր չի կարող հասցնել:

Քամիները նույնպէս ֆլասակար ազդեցութիւն են թողնում դալմաթյան յերիցուկի թեցանքի և թե նոր տնկված թփերի վրա: Այդ պատճառով էլ այն վայրերը, վորտեղ հաճախակի ուժեղ քամիներ են լինում, դալմաթյան յերիցուկի մշակման բարենպաստ շրջան համարվել չեն կարող:

### ՀՈՂԱՍԱՍԻ ԸՆՏՐՈՒՅՅՈՒՆԸ

Դալմաթյան յերիցուկի լավորակ պլանտացիա ստանալու համար հիմնական մոմենտներից մեկը, վորի վրա պետք է առանձին ուշադրութիւն դարձնել, հողամասի ընտրութիւնն է:

Այս կուլտուրայի պլանտացիայի հողամասերը պետք է լինեն լանջերում կամ լեռների ստորոտներում: Հարթավայրերի հողամասերը կարելի չէ ոգտագործել պլանտացիաների համար մի-

այն այն դեպքում, յերը նրանք վորոշ թեքութիւն ունեն, վորպեսզի ջուրը չհավաքվի և կանգ չառնի հողամասի վրա:

Հողամաս ընտրելիս պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, վոր ուժեղ քամիներից պաշտպանված լինի:

### ՀՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Դալմաթյան յերիցուկն աշնանը տնկելու համար հողը պետք է նախապատրաստել նախորդող կուլտուրաների բերքահավաքից հետո՝ 20 սմ վոջ պակաս խորութեամբ խոր ցրտահերկ կատարելով: Հողամասերը պետք է հարթեցնել, լցնելով բոլոր փոսերն ու ակոսները և վերացնելով թրմբերը:

Պլանտացիաներ և տնկարաններ հիմնադրելիս դաշտի այն կողմում, վերտեղից հեղեղներ են սպասվում, հատուկ ջրտար առու յե պատրաստվում, վորպեսզի յեկող ջրերը դաշտը չանցնեն, այլ այդ առվով գնան:

Ցանքից կամ տնկելուց առաջ կատարվում է կրկնավար և հողամասը յերկու հետք փոցխվում է:

Նախքան վարելը, ինչպէս նաև կրկնավարից ու փոցխից առաջ հողամասը պետք է մաքրել քարերից. բացի այդ, հատուկ ուշադրութիւն



դարձնել նաև մուխսոտերը վերացնելու վրա: Այս աշխատանքներն անհրաժեշտ է կատարել բույսերի համար հողում լավագույն պայմաններ ստեղծելու և հետագա մշակման աշխատանքները հեշտացնելու համար:

## Ս Ե Ր Մ Ա Ց Ո Ւ

Դալմաթյան յերիցուկի նորմալ զարգացման և բարձր բերք ստանալու համար անհրաժեշտ է, վոր սերմացուն լինի լավորակ:

Հավորակ համարվում է այն սերմը, վորի ծլունակությունը 60<sup>0</sup>/<sub>0</sub>-ից, իսկ մաքրությունը՝ 95<sup>0</sup>/<sub>0</sub>-ից պակաս չէ: Սերմերը պետք է լինեն մաքուր, վարակված չլինեն այլ բույսերի ու մուխսոտերի սերմերով և կողմնակի խառնուրդներով:

Հավ, առողջ և միահամուռ ծլելը կախված է սերմերի ծլունակությունից:

Դալմաթյան յերիցուկի ցանքը կատարվում է ուշ աշնանը (ձյան տակ): Մրա առավելությունն այն է, վոր վաղ գարնանը ծիւերն արդեն դուրս են գալիս, և դրանով հետագա մշակման ու խնամքի աշխատանքն էլ հեշտանում է:

Բերքատվության բարձրացման համար նահրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել սերմացուի նախապատրաստման վրա:

Սերմացուի համար դալմաթյան յերիցուկի

ծաղիկների բերքահավաք կատարելիս ամենագուլխավոր խնդիրը հասունացման և հավաքի ժամանակը ճիշտ վորոշելն է: Բերքահավաքի ճիշտ ժամանակը վորոշվում է ծաղիկների գույնի ընդհանուր գորշացմամբ, ինչպես և նրանով, վոր մատով մի թեթև սեղմելիս սերմերը թափում են:

Հիշված մոմենտները ճիշտ վորոշելուց է կախված սերմերի ծլունակության տոկոսը:

## ՏՆԿԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ


Դալմաթյան յերիցուկի սածիլները պատրաստվում են տնկարաններում:

Տնկարանները սովորաբար հիմնադրվում են ավելի բերրի և փուխր հողերում, վորոնք զբաղված են յեղել բանջարանոցային կուլտուրաներով և վորոնք գտնվում են ջրի մոտ՝ յերկարատև յերաշտ լինելու դեպքում ջրելու խնդիրն ապահովելու համար:

Տնկարանին հատկացված հողամասը խնամքով և խոր վարվում է ու յերկու հետք փոցիվում, այնպես վոր ստացվի փուխր և հարթ մակերես: Բացի այդ, դաշտը մաքրվում է մուխսոտերի արմատներից, կոճղարմատներից և քարերից:

Փուխր և հարթ մակերես ստանալուց հետո հողամասը դժանշվում է: Գծանշումը կատարվում է հետևյալ կերպ. դաշտը բաժանվում է մեկ

մետր լայնությամբ մարզերի: Մարզերի մեջ 60  
 ամ լայնությամբ ազատ տարածությունն և թող-  
 նըվում, վորն ոգտագործվում և վորպես ճանա-  
 պարհ, իսկ կարիք յեղած դեպքում ոգտագործ-  
 վում և մարզերը շրեյու համար (տես նկ. 2):  
 Հողամասը մարզերի բաժանելիս մարզերը պատ-  
 րաստվում են ըստ հողամասի թեքության,  
 վորպեսզի շրեյու հնարավորությունն լինի:



Նկ. 2. Տնկարանի մարզերը


Խնամքի ու մշակման հետագա աշխատանք-  
 ները հեշտացնելու համար անհրաժեշտ և, վոր  
 մարզերը լինեն միատեսակ՝ լայնությունը 1 մե-  
 տրը, իսկ յերկարությունը 15—20 կամ ավելի  
 մետր, նայած հողամասի հարմարությանը և շրե-  
 յու պայմաններին:

Վորքան վերջինս հնարավորությունն և տա-  
 լիս կանոնավոր վոռոգման տեսակետից, նույն-  
 քան և պետք և վերցնել մարզերի յերկարու-  
 թյունը:


Ցանքից առաջ բոլոր մարզերը ձեռքի փոց-  
 խերով փխրեցվում ու հարթվում են:

Ցանքի ժամանակ ակոսներ բաց անելու հա-  
 մար պատրաստում են ձեռքի հատուկ փայտյա  
 մարկյոր՝ 6 հատ յերկաթե ատամով՝ միմյանցից  
 20 ամ հեռավորու-  
 թյան վրա (նկ. 3):

Վերոհիշյալ մար-  
 կյորով մարզերի  
 մեջըստ լայնության  
 $1\frac{1}{2}$ —2 ամ խորու-  
 թյամբ ակոսներ են  
 փորվում: Այդ ա-  
 կոսների մեջ սերմը  
 ձեռքով ցանվում և,  
 հողով մի թեթև  
 ծածկվում և ու պնդացվում (տրամբովկայի յե-  
 յենթարկվում) (նկ. 4):



Նկ. 3. Փայտյա մարկյոր



Նկ. 4. Փայտե ափան (տրամբովկա)

Հողի տրամբով-  
 կան կամ գլանումը  
 կատարվում և գըլ-  
 խավորապես սեր-  
 մերը քամիններից  
 պաշտպանելու հա-  
 մար, վորոնք կա-  
 ռող են հողի վերի  
 շերտը սերմերի հետ միասին մարզի միջից քշել,  
 կամ վորոշ չափով տեղից շարժել ու կուտակել

մարզի մի ծայրում և միաժամանակ, վոր կարե-  
վոր նշանակութիւն ունի, հողի մեջ մազա-  
կանութիւնն ուժեղացնելու և սերմերին ցածի-  
շերտերից խոնավութիւն մատակարարելու հա-  
մար:

Սորհուրդ չի տրվում դարմաթյան յերիցու-  
կի ցանքը կատարել գարնանը կամ վաղ աշնանը.  
ցանքի ամենալավ ժամանակը համարվում է  
ձմռացանքը (ուշ աշնանը՝ ձյան տակ): Ուշ աշ-  
նանը, ձյան տակ ցանված տնկարանը վեգետա-  
ցիայի ընթացքում վոռոգման կարիք չի զգում.  
միայն չորային ամառ լինելու դեպքում յերբեմն  
մեկ անգամ ջրելու կարիք է լինում:

Ուշ աշնանը ցանելը նաև այն առավելու-  
թիւնն ունի, վոր սերմերն անցնելով իրենց նա-  
խապատրաստման ստադիան աշնանից մինչև  
զարուն, միահամուռ ծլում են ու տալիս են լավ  
առողջ ծիւեր:

Գարնանը ցանել խորհուրդ չի տրվում, վո-  
րովհետև չորային պայմաններ լինելու դեպքում  
սերմերը մնում են չոր, ուշ են ծլում և մոլա-  
խտաբերի ծիւերը նրանց խեղդում են: Բացի այդ,  
գարնան ցանքի դեպքում հաճախ կարիք է լի-  
նում վեգետացիոն ջուր տալ, վորը կատարվում  
է ձեռքով և բարձրացնում է կուլտուրայի ինք-  
նարժեքը:

Մարզերը հոսող ջրով ջրելը (յեթե ջուրը մար-

զի մեջ լճանում է) վրասակար ազդեցութիւն  
է թողնում, մանավանդ յերբ ծիւերն արդեն դուրս  
են յեկել:

Արևի ճառագայթների ազդեցութեան տակ  
հողի մակերեսն ուժեղ տաքանալու հետևանքով  
հաճախ նուրբ ծիւերը կարծես թէ խաշվում ու  
վոչնչանում են, վորի հետևանքով տնկարանը  
նոսրանում է: Ահա այս պատճառով գարնան  
ցանքն աննպատակահարմար է, վորովհետև նա  
աշնանը ցանածից մի քիչ ուշ է ծլում և ուժեղ  
տաք յեղանակ սկսվելիս բույսերը դեռ փոքր են  
լինում: Այն դեպքերում, յերբ անհրաժեշտ է  
գարնանը ցանել, նոր դուրս յեկող ծիւերն արեւից  
պաշտպանելու համար պետք է ստվերավորել:  
Այդ նպատակով ոգտագործում են փայտի թեփ,  
ծառի ճյուղեր կամ յեղեգից գործված խսիր-  
ներ:

Ամենից նպատակահարմարը համարվում է  
թեփը, վորովհետև այն նախևառաջ պահպա-  
նում է հողի խոնավութիւնը, յերկրորդ՝ պաշտ-  
պանում է հողի մակերեսն ուժեղ տաքացումից և  
մատղաջ ծիւերը բավականաչափ պաշտպանվում  
են վոչնչացումից:

Մեկ հեկտար տարածութեամբ (չհաշված ճա-  
նապարհները) տնկարան հիմնադրելու համար պա-  
հանջվում է 20—25 կիլոգրամ 60% ծլունակու-  
թիւն ունեցող սերմ:

Սերմերի ծլունակությունը բարձր կամ ցածր լինելու դեպքում ցանքի նորման ել համապատասխանորեն պակասում կամ ավելանում է:

Մեկ հեկտար տնկարանից կարելի յե ստանալ այնքան սածիլ, վոր կբավարարի 15 հեկտար պլանտացիա տնկելուն:

Յուրաքանչյուր մարգում ճիշտ քանակությամբ սերմ ցանելու համար անհրաժեշտ է մեկ հեկտար ոգտակար տարածության նորման՝ 25 կիլոգրամը բաժանել մարգերի թվի վրա:

Որինակ՝ մարգի յերկարությունը 20 մետր է, լայնությունը՝ մեկ մետր, հետևաբար մեկ հեկտարում կլինի 500 մարգ: 25 կիլոգրամը բաժանած 500-ի վրա կստացվի 50 գրամ: Ուրեմն այս դեպքում յուրաքանչյուր մարգում պետք է ցանել 50 գրամ սերմ:

Վորպեսզի ցանելու ժամանակ հարմար լինի մեկ մարգի նորման հեշտությամբ վերցնել և ամեն անգամ կշռելու կարիք չլինի, համապատասխան չափի աման են վերցնում (որինակբաժակ) և յուրաքանչյուր մարգում այդ ամանով մեկ սերմ են ցանում:

Տ Ն Կ Ա Ր Ա Ն Ի Խ Ն Ա Մ Ք Ը


Գարնանը, յերբ յերիցուկն սկսում է ծլել, նրա հետ միասին ծլում են նաև շատ մուլախոտեր և խնամքի առաջին ու ամենահիմնական աշխատանքը քաղհանն է: Առաջին քաղհանը պետք

է կատարել այն ժամանակ, յերբ կուտուրան արդեն 1—2 տերև է տվել (չհաշված շաքիլատերևները): Միջարքային տարածություններում քաղհանը կատարվում է փոքր հողուրագներով, իսկ շարքերի միջի մուլախոտերը հեռացվում են ձեռքով:

Խնամքի յերկրորդ աշխատանքը նոսրացումն է: Նոսրացումը պետք է սկսել այն ժամանակ, յերբ 3—4 իսկական տերև է յերևացել: Նոսրացման հետևանքով ստացված բույսերը պետք է տնկել հատուկ այդ նպատակի համար նախապես պատրաստած մարգերում:


Նոսրացումը և պիկիրովկան անհրաժեշտ է կատարել ամպամած յեղանակին, անձրևից խոնավացած մարգերում:

Նոսրացումը պիտի կատարել այնպես, վոր մարգում մնացած բույսերը մեկը մյուսից 5 սմ հեռավորություն ունենան: Պիկիրովկայի ժամանակ նույնպես պիտի պահպանել այս տարածությունը (բույսը բույսից 5 սմ հեռավորության վրա տընկել):



Տնկարանի հետագա խնամքը (մինչև նկ. 5. Քաղհանի ուրազ պլանտացիա տեղափոխելը) հիմնականում կայանում է նրանում, վոր մարգերն ու ճանապարհները պահվեն մուլախոտերից ազատ ու փութը

վիճակում: [Վեգետացիոն շրջանի ընթացքում սո վորաբար տնկարանը քաղհանվում է յերեք անգամ:



Նկ. 6. Տնկարանի ընդհանուր տեսքը  
Տնկարանի մշակման (խնամքի) աշխատանքների ժամկետները հետևյալներն են.  
Առաջին քաղհանը կատարվում է մայիսի առա-

ջին կեսին (5—10-ին), նոսրացումը՝ 25—30-ին, յերկրորդ քաղհանը՝ հունիսի կեսերին (10—15-ին), յերրորդ քաղհանը՝ սոսստոսի առաջին կեսին (10—15-ին):

Սածիլները տնկարանից հանում և իրենց մշտական տեղում (սլլանաացիա) տնկում են հոկտեմբերի վերջերին (25—30-ին):

ԾԱՆՈԹՈՒԹ — Ժամկետներն որիենտիր են, հիմք ունենալով Ստեփանավանի շրջանի ավյալները. դրանք փոփոխության կենթարկվեն, յերնելով տարբեր շրջանների պայմաններից: Ուստի հիմնականում պետք է ղեկավարվել վերեվում հիշատակված՝ բույսի ֆաղաների ավյալներով:

**Մեկ հեկտար սեկտրանի մշակման որիենտիր նորմաները**

№	Աշխատանքի տեսակները	Մարդ-որվա արտադրանքի նորման՝ հեկտարով	Մեկ հեկտարին պահանջվում է մարդ-որ
1	Վարը (յեզներով) . . . . .	0,11	9
2	Փոցխում 2 հետք . . . . .	1,0	1
3	Մարզեր պատրաստելը . . . . .	0,1	10
4	Մարկիրովկա (մարզեր պատրաստելը և ակոսներ քաշելը) . . . . .	0,2	5
5	Ցանք . . . . .	0,04	25
6	Սերմեր ծածկելը և տափանելը . . . . .	0,2	5
7	Առաջին քաղհան . . . . .	0,03	35
8	Նոսրացում և վերատնկում	0,05	20
9	Յերկրորդ քաղհան . . . . .	0,04	25
10	Մոլախոտերը դաշաից դուրս տանելը . . . . .	0,2	5
11	Յերրորդ քաղհան . . . . .	0,03	33

12	Սածիլները հողից հանելը և սարսիրովիկան . . . .	50,04	25
13	Տնկելը և ջրելը . . . . .	2000 հաա	25
14	Տնկարանը ջրելը . . . . .	0,5	2
		Ընդամենը 225	

## Պ Լ Ա Ն Տ Ա Ց Ի Ա

Պլանտացիան կարող է լինել յերկու տեսակ՝ սածիլներով տնկված և սերմերով ցանված:

### Ա) ՊԼԱՆՏԱՑԻԱՅԻ ՇԻՄՆԱԴՐՈՒՄԸ ԱՍԻՆՆԵՐՈՎ

Պլանտացիան հիմնադրվում է սածիլներով, ուշ աշնանը՝ հոկտեմբերին, նոյեմբերին, իսկ զեկտեմբերին կարելի յե տնկել միայն այն ղեպքում, յեթե տնկելու ժամանակ հողը ղեռ սառած չէ:

Սածիլները տնկում են 8—10 սմ խորությամբ փոսերում, փորելով բահով կամ հողուլքով:

Սածիլներն ըստ հնարավորության պետք է աշխատել տնկել ամպամած յեղանակին, ավելի լավ է անձրեից հետո:

Ուղիղ շարքեր ստանալու համար անհրաժեշտ է հողամասը մարկյորով գծանշել և ապա տնկել՝ միջարքերում պահպանելով 70 սմ տարածություն, իսկ բույսերի մեջ՝ 30 սմ: Այս խտությունը տնկելու ղեպքում մեկ հեկտարի համար կպահանջվի 47—48 հազար սածիլ:

Վորպեսզի անձրևի և ձյան ջրերը կանգ չառնեն և ջուրը չլճանա, վորը կարող է վնասել պլանտացիային, լվանալով հողը, լանջերում պլանտացիաներ ղցելիս անհրաժեշտ է շարքերի ուղղությունը վերցնել փոքր թեքությունով դեպի ցած:

Նորմալ և լավ պլանտացիա ստանալը կախված է նաև սածիլներից: Սածիլները պետք է լինեն առողջ, ջոկված և լավ զարգացած արմատային սխտեմով: Տնկելու ժամանակ սածիլի շուրջը հողն ամուր սղմվում է, վորպեսզի նրա արմատային սխտեմը փոսի մեջ ամուր նստի ու կպչի հողին:

Աշնանը, տնկելուց միառժամանակ հետո, կամ վաղ զարնանը պլանտացիայի այն տեղերում, վորտեղ տնկված սածիլները չեն կպել, լրացուցիչ տնկում են: Այս նպատակով, տնկած սածիլների քանակի 10—15% -ի չափով, տնկարանում անհրաժեշտ է ունենալ պահեստի սածիլ:

### Բ) ՊԼԱՆՏԱՑԻԱՅԻ ԽՆԱՄԲԸ

Պլանտացիայի լնամբի հիմնական աշխատանքներն են՝ միջարքերի ու շարքերի փխրեցումը և մոլախոտերի քաղհանը:

Պլանտացիայի հիմնադրման հաջորդ տարին (առաջին տարին) այդ գաշտում կատարվում է 3—4 քաղհան և մեկ կուլտիվացիա էլ աշնանը: Յերկրորդ տարին, յեթե պլանտացիան չի նոսրա-



Նկ. 7. Գաղմաթյան յերկրակի կուլտիվացիան

ցել, կատարվում է յերկու քաղհան, իսկ լավագույն պլանտացիաներում, միայն մեկ քաղհան, վորովհետև դալմաթյան յերկրակը լավ զարգանալու դեպքում ինքը ճնշում է մուլախոտերին և հնարավորություն չի տալիս նրանց զարգանալու:

Անցյալ տարիների պլանտացիաներում (2—3 և ավելի տարեկան) վեգետացիոն շրջանում, բացի յերեք անգամ քաղհանելուց, յերեք անգամ էլ հողը կուլտիվատորով փխրեցվում է:

Յերրորդ կուլտիվացիայի փոխարեն աշնանը, բերքահավաքից հետո, բուկլից է կատարվում, վորը դաշտը մաքրում է մուլախոտերից, փխրեցնում է հողը և դալմաթյան յերկրակի արմատային սիստեմը պաշտպանում է ձմեռվա ուժեղ սառնամանիքներից:

Պլանտացիաների մշակությունը (քաղհան, կուլտիվացիա և այլն) կատարվում է հետևյալ որինտիթ ժամկետներին:

1-ին քաղհան, 1-ին կուլտիվացիա և լրացուցիչ սածիլելը մայիսի 1—10-ը.

2-րդ քաղհան, 2-րդ կուլտիվացիա — հունիսի 1—10-ը

3-րդ քաղհան և 3-րդ կուլտիվացիա — հուլիսի 1—10-ը.

4-րդ քաղհան և 4-րդ կուլտիվացիա, ըստ պահանջի:

Մեկ հեկտարի սածիլ անկելու որիննիսի Գորմաները

№ Աղյուսակում	Աշխատանքի տեսակները	Մարդ-օրվա արտադրանքի նորման հեկտարով	1 հեկտարին պահանջվում է մարդ-օր
1	Վարելը (յեղներով) . . . . .	0,11	9
2	Փոցխում . . . . .	1	1
3	Մարկիբովկա . . . . .	0,1	10
4	Փոսեր փորելը . . . . .	0,2	5
5	Սածիլները պլանտացիա տեղափոխելը . . . . .	45,000	0,5
6	Սածիլներ ցրելը . . . . .	0,3	3,5
7	Տնկելը . . . . .	0,042	25
8	Լրացուցիչ տնկելը (գարնանը) . . . . .	0,33	3

Ընդամենը 57

9. ՅԵՐԻՑՈՒԿԻ ՑԱՆՔԸ ՍԵՐՍԵՐՈՎ

Այսպիսի պլանտացիայի համար հողը պետք է շատ խնամքով մշակված լինի, վորպեսզի հողի մակերեսին բոլորովին կոշտեր չլինեն, վորովհետև կոշտերը խիստ խանգարում են ցանելու համար ակոսներ բաց անելուն, ինչպես նաև սերմերը ծածկելուն ու տափանելուն:

Այսպիսի պլանտացիաների համար հողն անպայման պետք է նախորոք վարված լինի, իսկ

ցանքից առաջ կրկնավար արվի ու յերկու հետք խաչաձև փոցխվի այնպես, վոր հողամասի մակերեսը բոլորովին հարթվի:

Խոպան հողերի նախացանքային մշակությունը կատարվում է հետևյալ ձևով. առնվազն 20 սմ խորությամբ վարվում է և սկավառակավոր ու սովորական փոցխով կրկնակի փոցխվում, իսկ այն հողերը, վորոնք արդեն յեղել են մշակության տակ, նախորդ կուլտուրայի բերքը հավաքելուց հետո հողը վարվում է և 2—3 հետք փոցխվում:

Հողամասը գծանշվում է ձիու մարկյորով, վորի ատամների հեռավորությունը 70 սմ է (նկ. 8):

Ցանքը կատարվում է մարկյորի բացած  $1\frac{1}{2}$ -2 սմ խորությամբ ակոսներում և անմիջապես ձիու գլաններով տափանվում:

Մեկ հեկտարին գործադրվելու յե 10 կգ 60% ծլունակության սերմ: Ցանքի նորման կարող է ավելանալ կամ պակասել, նայած սերմի ծլունակությանը:

նկ. 8. Փայտյա մարկյոր


Մեկ հեկտարի սերմը ճիշտ բաշխելու համար անհրաժեշտ է կիրառել հետևյալ կանոնը:

Հողամասի լայնությունը բաժանած միջար-



քերի լայնության վրա հավասար և ակոսները կամ շարքերի քանակին:

Որինակ, հողամասի լայնությունը 130 մետր է կամ 13,000 սմ, իսկ միջշարքերի տարածությունը 70 սմ, հետևապես 13,000-ը բաժանելով 70-ի, կստանանք տվյալ հողամասի շարքերի քանակը՝  $13000:70=193$  շարք:



Նկ. 9. Փայտե գլան

Որինակ, 10 կիլոգրամը (10,000 գրամ) բաժանած 193-ի, հավասար է 52 գրամի, այսինքն՝ ամեն մի շարքում պետք է ցանել 52 գրամ սերմ:


Ինչպես մարկիբովկան, այնպես ել ցանքը կարելի յե մեքենայացնել: Դրա համար գործ է ածվում ձիու շարքացան, վորի խոփիկները դասավորված են 70 սմ հեռավորությամբ, իսկ ձեռքի տափանի փոխարեն պետք է գործ ածել ձիու փայտյա գլան (նկ. 9), վոր յերբեմն կցում են շարքացանին և այսպիսով ցանքի ու տափանելու աշխատանքները միաժամանակ են կատարվում:

Դալմաթյան յերիցուկի ցանքի համար կարելի յե ոգտագործել խոտաբույսեր ցանելու շարքացանները, փոփոխելով խոփիկների միջի տարածությունն ու այն հասցնելով 70 սանտիմետրի և խոփիկների հետևից կցելով շղթաներ՝ ցանված սերմերը ծածկելու համար:

Դալմաթյան յերիցուկի ծիլերը շուտ ճանաչելու և շարքերը հեշտ վորոշելու համար խորհուրդ է տրվում դալմաթյան յերիցուկի սերմի հետ միասին ցանել բողկուկի սերմ, նախորդ յերիցուկի սերմի հետ խառնելով նրա 50%-ի չափով բողկուկի սերմ, վորի թփերը հենց առաջին քաղհանի ժամանակ հանվում են:

Դ. ՅԵՐԻՑՈՒԿԻ ՑԱՆՔԻ ԽՆԱՍՔԸ

Ցանովի պլանտացիայի խնամքի հիմնական, կարևոր և պատասխանատու աշխատանքն առաջին քաղհանն է:



Նկ. 10. Ցանքի շարքերը

Ծիլերը յերևալուց անմիջապես հետո պետք է սկսել ձեռքի քաղհանը և առաջին հերթին ձեռքով քաղհանել շարքը, ընդգրկելով 10 սանտի-

մետք լայնությամբ շերտ, վորպեսզի շարքամե-  
ջը հողուրագով քաղհանելիս յերիցուկը չփխսավի  
(տես նկ. 10):

Շարքերը ձեռքով քաղհանելուց հետո պետք  
է սկսել միջշարքերի քաղհանը—հողուրագներով,  
կամ, ավելի նպատակահարմար է, կուլտիվատոր-  
ներով: Ամեն անգամ քաղհանից հետո մոլախո-  
տերը դաշտից դուրս են տարվում և այրվում:

Առաջին քաղհանը ժամանակին և բարձր վո-  
րակով կատարելուց է կախված պլանտացիայի  
հետագա հաջողութունը:

Վեգետացիոն շրջանում կատարվում է յե-  
րեքից չորս քաղհան և մեկ նոսրացում:

Յերկրորդ քաղհանից անմիջապես հետո  
սկսում են նոսրացման աշխատանքը, բույսը բույ-  
սից թողնելով 15 սմ հեռավորության վրա, իսկ  
այդ նոսրացումից ստացած սածիլներն ոգտա-  
գործում են բաց տեղերը տնկելու համար:

Հետագայում վերը նշված ձևով կատարվում  
է յերրորդ քաղհանն ու կուլտիվացիան:

Չորրորդ քաղհանի և կուլտիվացիայի շրջա-  
նում (հոկտեմբեր-նոյեմբեր) պիտի կատարել  
2-րդ և վերջին նոսրացումը՝ բույսը բույսից թող-  
նելով 30 սմ հեռավորության վրա:

Պլանտացիայի ցամփի մեկ հեկտարի մասկման  
որիննօր հարմաները

Ձև № բնա կարգի	Աշխատանքի անակնները	Մարդ-օրվա արտադրանքի նորման՝ հեկ- տարի մասով	
		1 շփառվին պահանջվում է մարդ-օր	2
1	Վարը (յեզներով) . . . . .	0,11	9
2	Կրկնավար . . . . .	0,12	8
3	Փոցխում . . . . .	0,5	2
4	Մարկիրովկա . . . . .	0,2	5
5	Ձեռքի ցանքը . . . . .	0,05	20
6	Տախանելը՝ ձիու գլանով . . . . .	1,0	1
7	1-ին քաղհան . . . . .	0,03	35
8	Մոլախոտերը դաշտից դուրս տանելը . . . . .	0,2	5
9	2-րդ քաղհան . . . . .	0,04	25
10	Մոլախոտերը դուրս տանելը . . . . .	0,2	5
11	1-ին նոսրացում . . . . .	0,066	15
13	3-րդ քաղհան . . . . .	0,05	20
13	Մոլախոտերը դուրս տանելը . . . . .	0,2	5
14	2-րդ նոսրացում . . . . .	0,66	15

Ընդամենը 170

Աղյուսակ № 5

Անցյալ տարիների պլանտացիաների մեկ հեկտարի  
մասկման որիննօր հարմաները

1	1-ին կուլտիվացիա . . . . .	0,5 հեկ.	2
2	1-ին քաղհան . . . . .	0,04 »	25
3	Մոլախոտերը դուրս տանելը . . . . .	0,2 »	5
4	2-րդ կուլտիվացիան . . . . .	0,5 »	2
5	2-րդ քաղհան . . . . .	0,045 »	22
6	Մոլախոտերը դուրս տանելը . . . . .	0,2 »	5
7	3-րդ քաղհան . . . . .	0,05 »	20
8	Մոլախոտերը դուրս տանելը . . . . .	02 »	5
9	Մաղիկների 1-ին հավաքը . . . . .	20 կէր	40
10	» 2-րդ » . . . . .	15 »	20
11	» 3-րդ » . . . . .	10 »	10
12	Չորանոցներ տեղափոխելը . . . . .	1200 »	0,25
13	Մաղիկների չորացումը . . . . .	150 »	1
		300 »	1
14	» ձրաբումը . . . . .		1
15	3-րդ կուլտիվացիան բուկլիցի հետ միասին . . . . .	0,5 հեկա	2

Ընդամենը 135,25

## ԴԱԼՍԱԹՅԱՆ ՅԵՐԻՑՈՒԿԻ ԲԵՐՔԱՅԱՎԱՔԸ

Հավաքում են դալմաթյան յերիցուկի ծաղիկները, տերևներն ու ցողունները (փրեբը): Սկզբից հավաքում են ծաղիկները և ապա փրեբը:

Պլանտացիայի լրիվ ծաղկած ժամանակ, հուլիս ամսին սկսում են ծաղիկների հավաքը: Ծաղիկները հավաքը



կատարվում է չոր, արևոտ յեղանակին: Վոչ մի դեպքում չի կարելի ծաղիկները բերքահավաքը կատարել անձրևային կամ ամպամած յեղանակին, ինչպես նաև վաղ առավոտյան, ցողի ժամանակ, վորովհետև այդ դեպքում ծաղիկներն իրենց բնական գույնը կորցնում և փչանում են: Ծաղիկներ

Նկ. 11. Յերիցուկի բերքահավաքի հավաքը կատարվում է ձեռքով կամ հատուկ հարմարեցված սանրներով:

Ծաղիկները պոկվում են 2—3 սանտիմետր յերկարությամբ ծաղկակոթուններով:

Քաղած ծաղիկները հավաքում են գոգնոց

ներով կամ զամբյուղների մեջ, վորտեղից տեղափոխում են պարկերի մեջ և այդպես պարկերով տեղափոխում չորանոց:



Նկ. 12. Ծաղիկների մասսայական հավաքը

Աշխատանքային որում հավաքած ծաղիկները հանձնում են չորանոց որական յերկու անգամ՝ կեսորին և աշխատանքային որվա վերջում:

Ծաղիկները չորանոց են հանձնում որական յերկու անգամ նախ՝ այն պատճառով, վոր պարկերի մեջ յերկար մնալուց կարող են տաքանալ, վորպիսի հանգամանքը խիստ բացասաբար է ազդում հումուլյութի վորակի վրա և յերկրորդ՝ վորպեսզի հնարավոր լինի կեսորին հանձնած ծաղիկները, նախքան չորանոցում չորացնելը, փոել արևի տակ և թառամեցնել:

Վեգետացիոն շրջանում ծաղիկների բերքահավաք կատարվում է յերեք անգամ՝ առաջին հավաքը՝ հունիսի վերջին կամ հուլիսի սկզբին, յերկրորդ հավաքը՝ հուլիսի կեսերին, յերրորդ հավաքը՝ հուլիսի վերջերին կամ ոգոստոսի սկզբներին:

Առաջին հիմնական հավաքը կատարվում է պլանտացիայի լրիվ ծաղկելու շրջանում և առաջին հավաքի բերքն էլ զգալի չափով ավելի յե հաջորդող հավաքներից:

Աղյուսակ № 6

Ծաղկի սեկ հեկտարի հավաքի օրինակներ ևնրման

№ Ը. Կ.	Աշխատանքի տեսակը	2 տարեկան պլանտացիայից		3 տարեկան պլանտացիայից	
		Արտադրանքի նորման կգ-ներով	Պահանջվում է մարդ-օր	Արտադր. նորման կգ-ներով	Պահանջվում է մարդ-օր
		1	1-ին բերքահավաք	15	33,3
2	2-րդ բերքահավաք	10	22,6	15	20
3	3-րդ բերքահավաք	6	12	10	10
		Ընդամենը 67,8		70	

Յերկու տարեկան պլանտացիայի առաջին բերքը մեկ հեկտարից տալիս է մինչև 800 կգ թարմ ծաղիկ: Ավելի բերքատու համարվում են յերեք, չորս և հինգ տարեկան պլանտացիաները:

ՉՈՐԱՑՆԵԼԸ, ԾՐԱՐԵԼԸ ՅԵՎ ՊԱՇԵԼԸ

Ծաղիկները չորացնում են հատուկ չորանոցներում. մինչև չորանոց տանելը խորհուրդ է տրվում ծաղիկները 2—3 ժամ փոել արևի տակ, վորպեսզի թառամեն:

Որվա ընթացքում հավաքած ծաղիկն անմիջապես տեղափոխում են չորանոց, վորտեղ բարակ շերտով (3—4 սմ վոչ ավելի հաստությամբ) փռում են հատուկ յարուսներով դրված ցանցերի վրա:

Չորացնում են՝ չորանոցն աստիճանաբար տաքացնելով: Չորանոցում շերմաստիճանը Յ-ի 30—35-ից չպետք է անցնի: Չորանոցում շերմաստիճանն աստիճանաբար բարձրացնելը հնարավորություն չի տալիս ծաղկի սպիտակ թերթիկներին գերչորանալ, հակառակ դեպքում՝ խառնելու և ծրարելու ժամանակ թերթիկները փշրվում, մանրանում ու թափվում են, վորն ստանդարտի սկզբունքներին չի համապատասխանում:

Չորացումը հավասարաչափ ընթանալու, այն արագացնելու և բորբոսից խուսափելու համար անհրաժեշտ է փոված ծաղիկները 2—3 անգամ

խառնել: Այդ գործողութիւնը շատ զգուշ պիտի կատարել, վոր չորացած ծաղիկները չփշրվեն,

Չորս մաս թարմ ծաղկից ստացվում է մեկ մաս չորացրած, այսինքն՝ 100 կիլոգրամ թարմ ծաղկից՝ 25 կիլոգրամ չոր ծաղիկ:

Յեթե ծաղիկի բաժակը յերկու մատով ամուր սեղմելիս ցրիվ է գալիս, այն ժամանակ նաարդեն պատրաստ է ծրարելու համար:

Չորացրած, պատրաստի ծաղիկները ցանցերի վրայից զգուշութեամբ վերցնում են ու տանում ծրարելու:

Յեթե ծաղիկները շատ են չորացել և ծրարման ժամանակ փշրվում են, այդպիսի դեպքերում ծաղիկները մեկ գիշեր առանց ծրարելու թողնում են չորանոցում, վորի լուսամուտներն էլ բաց են անում, վորպեսզի ծաղիկները քիչ խոնավանան և միայն մյուս առավոտը կանուխ ծրարում ու հակեր են պատրաստում:

Դալմաթյան յերիցուկի չոր ծաղիկներից կազմում են 50—80—109 կիլոգրամ քաշ ունեցող հակեր: Հարմար և ստանդարտ հակեր ստանալու համար խորհուրդ է տրվում ծրարել մամուլների միջոցով:

Ծրարումից հետո հակերի վրա նշանակվում է տեղի №-ը, նետտո, բրուտտո քաշը և արտադրող վայրի հասցեն: Այս մակագրութիւնները պետք է լինեն պարզ, խոշոր տառերով, լավ, չճնշվող

ներկվող գրված: Ցանկալի յե այդ մակագրութիւնները կատարել մետաղե տրաֆարետներով:

Դալմաթյան յերիցուկի հակերը պահելու համար հատկացվում են հատուկ շէնքեր—պահեստներ: Պահեստները պետք է չոր լինեն և ունենան օդափոխվելու լավ հարմարութիւն. բացի այդ, պետք է, վոր արևի շատ ճառագայթներ մուտք չգործեն այնտեղ:

Հակավորված ծաղիկները (հումուլթը) խորհուրդ չի տրվում յերկար ժամանակ պահեստում պահել, վորովհետև այդ դեպքում ներգործող նյութը (պիրետրինը) խիստ կերպով պակասում է, դրա համար էլ պետք է առանց յերկար պահելու ուղարկել վերամշակման:

### ՀՈՒՄՈՒՅՅԻ (ՉՈՐ ԾԱՂԿԻ) ՎՈՐԱԿԸ

Հակավորվող հումուլթը (չոր ծաղիկը) պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին:

ա) չոր ծաղիկ խոնավութիւնը 10<sup>0</sup>/<sub>0</sub> -ից ավելի չպետք է լինի, վորովհետև ավելի բարձր խոնավութիւնից ծաղիկները հակերի մեջ կարող են բորբոսնել և աստիճանաբար փչանալ:

բ) չոր ծաղիկները պետք է ամբողջական (լրիվ) լինեն, այսինքն՝ նրանց սպիտակ լեզվակները թափված չպիտի լինեն.

գ) թույլատրվող խառնուրդներն են՝ տերևներ և ցողուններ, 3 սմ. -ից վոչ ավելի

յերկարությամբ, 5% մանրացած մասեր, վորոնք անցնում են 2 միլիմետր տրամագծով անցքեր ունեցող լարե մաղերից:

դ) կողմնակի խառնուրդներ՝ որգանական և հանքային.

որգանական խառնուրդներ՝ կողմնակի բույսերի և այլ որգանական նյութերի մասեր՝ 3%:

Հանքային խառնուրդներ՝ ավազ, հող, փոշի, քարի կտորներ և այլն՝ 1%:

### ՍԵՐՄԱՅՈՒԻ ԱՏԱՅՈՒՄԸ

Դարմաթյան յերիցուկի սերմը պատրաստվում է հետևյալ կերպ.

Պլանտացիայի լավագույն մասը թողնվում է վորպես սերմանոց, վորը պահանջում է հատուկ խնամքով մշակութուն: Այդ հողամասը պետք է չորս անգամ քաղհանել և ամեն անգամ մոլախոտերը լրիվ կերպով դաշտից դուրս տանել:

Սերմացուի բարձր վորակը կախված է սերմանոցի լավ մշակութունից ու խնամքից:

Սերմատանալու համար պլանտացիան թողնվում է մինչև լրիվ հասունութուն, այսինքն՝ այնքան, մինչև վոր յեզրի ծաղիկները (սպիտակ լեզվակները) թառամեն և ծաղկային զամբյուղները գորշանան ու մասամբ չորանան:

Սերմացուի համար թողնված ծաղիկների հավաքի ժամանակը ձիշտ վորոշելուց է կախված սերմերի վորակն ու ծլունակության տոկոսը:

Հասունացած ծաղիկների զամբյուղները հա-

վաքվում և չորացվում են չորանոցներում ու ծածկերի տակ: Սերմը պետք է հավաքել չոր, արևոտ յեղանակին: Չոր զամբյուղները հեշտությամբ ձեռքով փշրվում են և քամհարվում:

Մեծ քանակությամբ սերմացու ունենալու դեպքում անհրաժեշտ է սերմը ծեծել կալում: Սերմի կորստից խուսափելու և մաքուր սերմատանալու համար կալը պետք է ցեմենտով պատել:



Նկ. 13. Սերմը մաքրելը

Կալսելուց հետո քամհարվում է քամհար մեքենայով, իսկ վերջնականապես մաքրվում է ձեռքի մաղով:

Քամհարման ժամանակ ստացվող մնացորդների կորստից խուսափելու համար, վորոնք նույն-

պես շատ արժեքավոր են և ոգտագործվում են պիրետրին ստանալու համար, անհրաժեշտ է քամհարել փակ շենքում:

Քամհար մեքենայի ճիշտ կանոնավորման համար պետք է արհեստական հակառակ հոսանքները հարմարութունը պատրաստել, ստեղծելով թարմ ողի անհրաժեշտ հոսանք:

Սերմերը ծրարվում են կրկնակի բյազից կամ խիտ կտավից պատրաստած հատուկ ստանդարտ պարկերի մեջ՝ 20 կիլոգրամ նետտո քաշով:

Աղյուսակ № 7

Մի ծաղկի բազր կգ-ով, մի ծաղկից յեմ մի կիլոգրամ ծաղկից ստացվող սերմի քիվը


Մեկ ծաղկի քաշը գրամներով				Մեկ ծաղկի քաշը գրամներով		Սերմի քանակը		Մեկ կիլոգրամ ծաղկից					
Վորպես ապրանք		Սերմացուի համար		Մեկ ծաղկի քաշը գրամներով		Սերմի քանակը		Սերմ		Սալմանք		Սալմանքի օ/օ-ը	
Չօրացրած	Չօրացրած	Չօրացրած	Չօրացրած	Սերմ	Տականք	Մեկ ծաղկից	1 կիլոգրամ սերմում	Սերմ	Տականք	Սալմանքի օ/օ-ը	Տականքի օ/օ-ը		
0,78	0,24	0,50	0,37	0,22	0'13	200 հատ	1000000 հատ	400	186	40,0	18,6	գր.	գր.

Սերմացու պատրաստելու ժամանակ ստացված տականքը ծրարվում է 30 կիլոգրամանոց պարկերում և վրան հատուկ մակազրույթուններ արվում:

## ԴԱԼՄԱՔՅԱՆ ՅԵՐԻՑՈՒԿԻ ՓՐԵՐԸ

(ցողուններն ու սերեվները)

Դալմաթյան յերիցուկի փրերն ոգտագործվում են նույն նպատակի համար և նույն ձևով, ինչպես ծաղիկները:



Նկ. 14. Փրերի հունձը

Փրերն զգալիորեն ավելի պակաս պիրետրին են պարունակում, քան ծաղիկները: Ծաղիկները



Նկ. 15. Փրերը գեղեւը

մեջ պիրետրինի քանակը կազմում է  $1,6^{\circ}/_{\circ}$  իսկ  
փրերի մեջ՝  $0,4^{\circ}/_{\circ}$ :

Չնայած պիրետրինի պարունակութեան այս-  
պիսի զգալի տարբերութեան, անպայման պետք  
է ոգտագործել նաև փրերը, վորովհետև յեթե  
մեկ հեկտարից ստանում ենք 250—350 կիլո-  
գրամ չոր ծաղիկ, ապա չոր փրեր ստացվում է  
1000 կիլոգրամ, այսինքն՝ ծաղկից յերեք անգամ  
ավելի:

Փրերը հնձվում են ծաղիկների վերջնական  
բերքահավաքից հետո:

Փրերը հնձվում են ճիշտ այնպես, ինչպես  
խոտը՝ մանգաղներով կամ գերանդիով, իսկ յե-  
թե հողամասը հարթ է, ապա կարելի յե հնձել  
խոտհար մեքենայով:

Փրերը չորացվում են պլանտացիայում ճիշտ  
նույն յեղանակով, ինչպես խոտը: Չորացած փրե-  
րը հավաքում—կույտեր են կազմում, ապա  
պլանտացիայից տեղափոխում են և դիզում:

Դալմաթյան յերիցուկի փրերը սովորական  
խոտի նման մամլում, հակեր են կազմում, վոր-  
պեսզի տեղափոխելը հեշտ լինի:

Չոր փրերը պետք է պահել ծածկի տակ, իսկ  
յեթե հնարավորութիւնն չկա և ստիպված են լի-  
նում պահել բացօթյա, ապա պետք է լավ դե-  
զեր կազմել և վերևից բրեզենտով ծածկել, վոր-  
պեսզի մթնոլորտային տեղումները չփչացնեն:

Յերիցուկի փրեքն սկսում են հնձել 2—3 տարեկանից սկսած:

Փրեք հնձելը մեծ չափով բացելավում է դալմաթյան յերիցուկի բույսի զարգացումը, վորովհետև այդ դեպքում ավելի պակաս խոնավություն է կուտակվում, վորպիսի հանգամանքը յերիցուկը պաշտպանում է արմատային փտախտով հիվանդանալուց:

Աղյուսակ № 8.

Փրեքի հավաքման մեկ ևեկտարի որիեմեթր նորման.

№ Աղյուսակային	Աշխատանքի տեսակը	Մեկ հեկտարի արտադրանքի նորման	Մեկ հեկտարին պահանջվում է մարդ-որ
1	Փրեքը հնձելը . . . . .	0,2 հեկտ.	5
2	Կույտեր կազմելը . . . . .	0,5 >	2
3	Փոխադրելը . . . . .	2 տոնն	1
4	Դիղելը . . . . .	3 >	1
5	Մամլելը . . . . .	1 >	2

### Վ Ե Ր Ա Մ Շ Ա Կ Վ Ո Ւ Մ

Դալմաթյան յերիցուկի չոր ծաղիկները հատուկ ազացներում աղում են մինչև մանր փոշի դառնալը, վորը կոչվում է դալմաթյան փոշի:

Դալմաթյան փոշին պահվում է հերմետիկ կերպով փակվող թիթեղյա կամ ապակյա անոթներում:

Այսպես հերմետիկ կերպով է ծրարվում, վոր ներգործող նյութը՝ պիրետրինը չցնդի:

Պիրետրինը յեթերատու յուղ է և դալմաթյան յերիցուկի փոշուց ստացվում է եկատրակտացման միջոցով:

Եկատրակտացումը կատարվում է սպիրտով, յեթերով, բենզինով և այլն:

Փրեքը վերամշակվում են նույն յեղանակով, ինչպես ծաղիկները:

Իրենց աշխատանքներին մեծ ուժանդակություն ցույց տալու և կարևոր ցուցումների համար հեղինակները շնորհակալություն են հայտնում Հայֆիլի գիտ. աշխ. ընկ 2. Աստվածատրքյանին, Լեկտեխսիրիոյի Հայաստանի լիազոր ընկ. Ա. Հարությունյանին և Գետավանի նախկին խորհանտեսության զիրեկտոր ընկ. Վ. Գեվորգյանին:

ՔՈՎԱՆԴՍՈՒԹՅՈՒՆ

Նախաբան . . . . .	3
1. Ներածութիւն . . . . .	8
2. Դալմաթյան յերիցուկ . . . . .	10
3. Դալմաթյան յերիցուկի մշակման շրջան- ները . . . . .	13
4. Հողային-կլիմայական պայմանները . . . . .	15
5. Հողամասի ընտրութիւնը . . . . .	16
6. Հողի նախապատրաստումը . . . . .	17
7. Սերմացու . . . . .	18
8. Տնկարանի հիմնադրումը . . . . .	19
Տնկարանի խնամքը . . . . .	24
9. Պլանտացիա . . . . .	28
ա) Պլանտացիայի հիմնադրումը սածիլ- ներով . . . . .	28
բ) Պլանտացիայի խնամքը . . . . .	29
գ) Յերիցուկի ցանքը (սերմերով) . . . . .	32
դ) Յերիցուկի ցանքի խնամքը . . . . .	35
10. Դալմաթյան յերիցուկի բերքահավաքը	38
11. Զորացումը, ծրարումը և պահելը . . . . .	41
12. Հումուսի (չոր ծաղիկների) վորակը . . . . .	43
13. Սերմերի ստացումը . . . . .	44
14. Դալմաթյան յերիցուկի փրկը (ցողուն- ներ և տերևներ) . . . . .	47
15. Վերամշակում . . . . .	50

ՀՀ Ազգային գրադարան



NL0977682

27 ИЮЛ 1937

ԳՐԵՐ ԶՅ Կ.

357

1  
3786



НАРКОМЗЕМ АРМ. ССР  
ЗЕРНОВОЕ УПРАВЛЕНИЕ

Адамян С. и Хримлян А.

АГРОТЕХНИКА  
ДАЛМАТСКОЙ РОМАШКИ

Сельхозгиз, Ереван, 1987 г.